

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԳՐՈՂ
ԵՎ ՀԱԱՐԱՎԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ԿԱՐԵՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ
(1909 – 1929 թթ.)

XX դ. սկզբից 30-ականների համարյա վերջը հայ գրական-հասարակական կյանքում նշանակալից գեր է կատարել գրող, մշակութային և հասարակական-քաղաքական գործիչ, գրամատուրգ ու թարգմանիչ Կարեն Սերգեյի (Սարգսի) Միքայելյանը (1883–1941): Ծնունդով նախիջևանցի, բուն Հայաստանցի, նա ողջ կյանքն ապրել է Ռուսաստանում՝ Մոսկվայում, մեկ վայրկյան անգամ չմոռանալով իր արմատները...

Կ. Միքայելյանը մեծ լուծա ունի այնպիսի նշանավոր գրքերի ստեղծման գործում, ինչպիսիք էին «Поэзия Армении» (1916) և «Антология армянской поэзии» (1940) ուսսերեն ծավալուն ժողովածուները, որոնք հաջողութուն ունեցան Ռուսաստանում և Հայաստանում: Բնականաբար, և՛ այդ տարիներին, և՛ ավելի վաղ՝ «Գարուն» ամսնախի հրատարակման ժամանակ (1910–1912), հայ մտավորականը սերտ կապեր է ունեցել գրականության, արվեստի և մշակութի հայ, ռուս և այլազգի մի շարք անվանի գործիչների հետ: Շատերի հետ Կ. Միքայելյանը եղել է ընկերական և գործնական ջերմ հարաբերությունների մեջ, որի վառ վկայությունն է նաև նրա նամակագրությունը: Վերջինս այնքան հարուստ է, որ մինչ օրս գեռ լիովին մատուցված չէ հասարակությանը. հիմնականում հրատարակվել են Կ. Միքայելյանի նամակները Հովհ. Թումանյանին, Արշակ Չոպանյանին, Եղիշե Չարենցին, Գարեգին Լևոնյանին, ինչպես նաև նրան ուղղված Վ. Տերյանի, Ա. Իսահակյանի, Սա. Ջորյանի և այլոց նամակները¹:

Ստորև հրատարակվող Կ. Միքայելյանի նամակները լրացնում են անվանի հայ մտավորականի կերպարը, բացահայտում նրա առնչությունները մի շարք հայտնի գործիչների հետ XX դ. 10 – 20-ական թվականներին: Նամակների ընթացքը պահպանվում են Հայաստանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում՝ Կ. Միքայելյանի և այլ հայ գործիչների արխիվային ֆոնդերում (Շ. Կուրղինյանի, Ա. Ծատուրյանի և այլոց): Հրատարակվող նամակներում կատարել ենք որոշ կրճատումներ (երբ խոսքը գնում է մասնավոր, կենցաղային և երկրորդական, գրականության և արվեստի հետ առնչություն չունեցող հարցերի շուրջ կամ այն գեպքում, երբ տեքստն անընթեռնելի է):

ՌՌԲԵՐՏ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

1 «Պատմա-բանասիրական հանդես», 1973, №2, էջ 233–244: «Լրարեր հասարակական գիտություններին», 1981, №2, էջ 88–107: «Սովետական գրականություն», 1983, №3, էջ 112–128: «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1984, №2, էջ 96–103 (ռուս.): «Լրարեր հասարակական գիտություններին», 1984, №11, էջ 81–86 (ռուս.): «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1987, №3, էջ 41–45 (հայերեն և ռուս.):

1. Կ. Միքայելյանը Շ. Կուրղինյանին²

29. 11. 1909 թ.

Մոսկվա

Հարգելի տիկին Շուշանիկ Կուրղինյան

Մոսկվայում կազմվել է մի խմբակ, — բաղկացած առավելապես երիտասարդ գրողներից, — որի նպատակն է հրատարակել մի շարք գրական-գեղարվեստական ալմանախներ: Այստեղ պիտի երևան գան մեր բոլոր աչքի ընկնող գեղարվեստական գրողներն ու մանավանդ առաջ քաշվեն մեր երիտասարդ ու սկսնակ գրական ուժերը: Այս վերջին նպատակը առանձնապես հանդիսանում է մեր ոգևորության աղբյուրը: Բոլոր աշխատակիցներն անկասկած կվարձատրվեն լիակատար չափերով:

Արդ, երբ արդեն հրատարակության նյութականը ապահովված է, Մոսկվայի հայ գրական խմբակը լիազորեց ինձ դիմելու Ձեզ Ձեր մոտիկ մասնակցության համար: Այս Ալմանախը պիտի լինի երիտասարդների առաջին հավաքական դեբյուտը: Ձեմ կասկածում, որ Դուք էլ կաշխատեք Ձեր պատշաճ տեղը գրավել այդ գրքում: Նյութերը խնդրեմ հասցրեք մեզ մինչև հունվար, որովհետև փետրվարի 1-ից ժողովածուն պիտի հանձնվի տպագրության:

Խորհին Հարգանքներով Գերասիմ³ Միքայելյան

Շ. Կուրղինյանի ֆ., № 96-III:

2. Յ. Խանդաղյանը⁴ Կ. Միքայելյանին

<1910–1911 թթ.>

Միրելի Կարեն

Այսօր ստացա «Գարնան» երկրորդ տասնյակը: Կասկած չունեմ, որ ամսվա ընթացքում կծախսվի բոլորը: Հավանորեն կարիք կլինի էլի մի 10–15 օրինակի, կգրեմ ժամանակին: (...)

Ուզում եմ կարծիքս իմանաս ալմանախի մասին և երևի առանձնապես քո գրվածքների մասին: Այստեղի իմ ծանոթ շրջանում գիրքը շատ լավ տպավորություն է թողնում, թե յուր արտաքինով և թե ներքին բովանդակությամբ, որ մեր ընթերցողի համար յուր մատչելիությունը մի գյուտ է ուղղակի: Երևակայիր, այդպես էլ ասում են՝ «ինչ լավ է, փոքրիկ բաներ են և այնքան գեղեցիկ, այնքան բովանդակալի»: Ծանոթներին մոտ կարդացել եմ մի քանի անգամ քո «Էրֆուրտի ծրագիրը» և մի անգամ էլ «Նահանջը»: Շատ լավ տպավորություն են թողնում երկուսն էլ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ իմ ունկնդիրները առանձնապես նկատում են քո գեղարվեստական մաների պարզությունը, քո լեզվի բնական վճիտ հոսան-

2 Շուշանիկ Կուրղինյան (1876–1927) — հայտնի բանաստեղծուհի:

3 Ռուսական միջավայրում Կ. Միքայելյանին երբեմն կոչում էին այդպես:

4 Յուլիա Խանդաղյան (1886–1935) — գրականագետ, իրավաբան, մոսկովյան «Գարուն» ալմանախի խմբագիրներից:

քր: Եվ նկատի առ այն, որ դրանց մեծ մասը կիսագրագետ են, ինչպես ասում են, — «քիչը-միչ» միայն ծանոթ մեր գրականությանը: Այժմանախի մյուս հատվածներն էլ են մեծ ուշադրությունը և հետաքրքրությունը լսում:

Մի խոսքով — ընդհանուր կարծիքը գրքի մասին ավելի քան նպաստավոր է: Դրան պակաս չի օգնում և գրքի գեղեցիկ արտաքինը, որ մեր մեջ այնքան էլ սովորականներից չէ:

Գալով իմ անհատական կարծիքին, պետք է ասեմ, որ տպավորությունս գորեղ է ու պակաս չէ, քան առաջ կարող էր լինել: Մանավանդ որ ուրիշների համար էի կարգում, բարձր ձայնով, իսկ այդ հանգամանքը միշտ ուժեղացնում է գրվածքի ազդեցությունը, իհարկե, աչքի առաջ ունենալով որոշ տրամադրություն: (...)

Իմ կարծիքով, այժմանախի ամենահետաքրքիր կտորները քոնն են և Վահանինը (Տերյան — Ռ. Բ.): Հետաքրքիր ամեն տեսակետից. թե՛ նյութի ներքին բովանդակության և թե՛ արտաքին կատարումի: Վահանի «Վերագարձի» 2-րդ մասն ու մեկ էլ «Ոսկի հեքիաթի» առաջին կտորը ուղղակի կատարյալ են գեղարվեստական տեսակետից: Մեր դրականության մեջ դրանք հազվագյուտ գոհարներ են ուղղակի: Հրաշալի են, հրաշալի: Մնացածներից լավ են (քո մասին հետո) և շատ լավ Պարսամյանի, Նազարյանի և Իսահակյանի բանաստեղծությունները, չնայած որ վերջինի գրվածքը նրա հնագույն մոտիվներից է:

Մյուսները (...) միանգամայն բավարար կարելի է համարել, թեև շեշտում եմ, իմ կարծիքով, վերը հիշածներս են ամենահաջողները թե՛ համեմատական չափով և թե՛ իրենց աբսոլյուտ արժանիքներով:

Բելլետրիստիկայի մեջ, իմ համոզմամբ, առաջին տեղը բռնում ես դու: Ժիշտ է, Ահարոնյանի «Հայրը» արցունք է քամում ունկնդիրների աչքերից, բայց այդ հանգամանքը ինձ ու քեզ համար ոչ մի արժեք չունի: (...) Դեհ, իմ կարծիքը խոմ հայտնի է քեզ մոտավորապես: Այն էլ իմացիր, որ նույն մարդիկ արտասովեցին քո «Նահանջից»: Սակայն նախ «Էրֆուրտ քաղաքի ծրագիրը»: Չափազանց լավ տպավորություն է թողնում: Լսողներից մինը նույնիսկ համեմատության կարողացավ դնել քո և Ահարոնյանի գեղարվեստական ձևերի մեջ և ահա ինչ նկատեց: «Ահարոնյանն, — ասում է, — վերջը շատ է փչացնում անբնական խոսքերով, ներկերով, մինչև վերջին երեսի սկիզբը լավ էր, հետո փչացրեց»: Իսկ քո «Էրֆուրտի» մասին նկատեց, որ շատ պարզ, բնական և գեղեցիկ բան է: Նկատիր, առանձնապես շեշտվում է պատմվածքիդ չեխովյան կարճ քչախոս ձևը: Նույն կարծիքին եմ և ես:

Ասելիքս ավելի «Նահանջի» մասին է: Նախ քո վերաբերմունքը քո հերոսին: Հիշում ես Ծատուրն (Ա. Ծատուրյան — Ռ. Բ.) ինչպիսի որոշ և բացասական վերաբերմունք էր պահանջում քեզանից, որը (վերաբերմունքը) իբրև թե պակասում է քո գրվածքում: Դու աշխատում էիր ապացուցել, որ քո վերաբերմունքը միանգամայն բացասական է, և որ դու նպատակ ես ունեցել խարազանել, բացահայտ դարձնել որոշ սորտի հեղափոխականների իսկական պատկերը:

Այժմ, երկրորդ անգամ կարգալույզ գրվածքդ, կարծում եմ, որ դու կամ կեղծում էիր (ներքին արտահայտություն) կամ չէիր հասկանում ինքդ քեղ: Քո մեջ սոցիալ-դեմոկրատն էր խոսում այդ լեզվով և նա չարաչար սխալվում էր, կարծելով, որ կարող է կաշկանգել գեղարվեստագետի գեղաէթիկական թոհչքը:

Քո գրվածքում ոչ միայն սատիրանման որևէ բան չկա, այլ ընդհակառակն-վերին աստիճանի համակրանք գեպի հերոսի տանջանքները, զարմանալի նուրբ մարգկային սեր դեպի տանջված, թեկուզ երեկվա գաղափարակիրը: Համարձակություն ունեմ ավելին պնդելու: Քո հերոսի նահանջը հոգեկան նահանջ չէ ամենևին, նա յուր համակրանքն ու սիրտը չի ծախել ուրիշ գաղափարի, նա նույն հին դաղափարների երկրպագուն է այժմ, թեև առանց կամքի այդ գաղափարին ձգտելու:

Կյանքի սոսկալի հարվածները, որ տեղում են ամեն կողմից. — առաջացրել են նրա մեջ կամքի ատրոֆիա, դործելու ապատիա, բայց չեն կարողացել նրա զգացմունքները խեղդել: Ողբերգությունը հենց նրանումն է, որ Ռոստոմյանը այժմ էլ գաղափարական է, նույն ազատության սիրո մեջ փոթոթվող ջարգված, լքված հեղափոխական: Դառնանք դրքիդ: Ո՞ր մոմենտն էս գու համարում ամենահետաքրքիրը, ամենախորը հոգեբանական տեսակետից: Եվ ի՞նչն է ամենից ուժեղ ազգում այդ պատմվածքում՝ Ռոստոմյանի նյութակա՞նը, նրա անվերջ ձախորդություննե՞րը, նրա դարիբույժները կամ գուցե վերջին կոչմարային մղձավա՞նջը, որի մեջ խելակորույս մարգը յուր մագիլներն է թաղում նիրհող կնոջ մարմնի մեջ: Ես կարծում եմ, որ ողբերգությանը ոչ առաջին, ոչ երկրորդի և ոչ էլ այլ մի ուրիշ արտաքին հանգամանքի մեջ է: Պատմվածքի ամենախոր, ամենացնցող տեղը այն տեղն է, որ պարզ արտահայտվում է Ռոստոմյանի հոգեկանը, այն որ գեռևս հրաժեշտ չէ տվել յուր նախկին գաղափարներին: Այո, ցնցող, սրտաճմլիկ է տեսնել այդ հրեշավոր հակասությունը: Մարդը նույնն է, բայց նույնը չէ: Սիրում, զգում է առաջվա նման, բայց հուսազուրկ և հուսախաբված, յուր մեջ ուժ չի գտնում առաջվա նման գործելու: Այլապես ի՞նչ գրամա: Մարդը մի ժամանակ կարմիր էր, այսօր դուրջ է և գաճաճ: Ինչո՞ւ «էրֆուրտի ծրագրի» հերոսը չի ցնցում մեր հոգու, այսպես ասած, հեղափոխական ջիղը:

Պարզ. որովհետև նա եթե հավատում էլ էր, այժմ չի հավատում: Որովհետև նրա դարձը դեպի հեղափոխությունը լուրջ գաղափարական հիմքեր չունեն, և նա այսօր յուր գաղափարները ողբալու հիմք չունի, — չէ՞ որ այդ գաղափարները կնոջ փեշից են եղել կախված: Այլ բան է Ռոստոմյանը: Նա եղել է իսկական գաղափարական գործիչ, նա այժմ էլ գաղափարական է, բայց մի բան պակասում է նրան, զժախտաբար շատ կարևոր բան՝ կամքը, հավատը գեպի յուր ուժերը (լսում ես՝ յուր):

Ռոստոմյանը այժմ էլ պաշտում է պրոլետարական կուլի մեծ գաղափարը: Այլապես նա չէր վիրավորվի ժանեթի խոսքերից, միայն իրան չէր դուբս բերի պարտված և չէր պաշտպանի յուր ընկերներին, յուր կուսակցությունը, հետևապես և մեծ գործը, որին նա այդպես ծառայում էր առաջ: Խիստ ինքնագատապարտումը, որ անում է Ռոստոմյանը, ես վերագրում եմ նրա գրգռված հոգեկան դրություն: Բոլոր հակասությունների միջից

ինձ համար պարզ է Ռոստոմյանի սիրող, գաղափարի համար տանջվող սիրտը: Կրկնում եմ, դու չես ծաղրել, այլ ինքդ ցավելով ես գրել այդ մարտիրոլողիան: Այդպես չեն ծաղրում:

Այն տեղը, ուր Ռոստոմյանը («Նահանջի» հերոսը – Ռ. Բ.), իրան պարտված ճանաչելով, ընդունում է յուր ընկերների մեծությունը և անուղղակի վեճ դադարի առաջ ծունկ չոքում, այդ տեղը, Կարեն, – ինձ արցունքի հասցրեց և չեմ քաշվում խոստովանելու, որ հազիվ պահեցի արտասուքս ներկաներից ամանչելուց:

Գուցե շատ մոտ են ինձ այդ գաղափարներն ու նրանց պարտվիլը (այժմյան ոեակցիան), գուցե ես չափազանց հիվանդ կերպով ազդվեցի, չգիտեմ: Ինձ համար այդ փաստը ակնհայտ է և նշանակալից: Եվ ես ուրախ եմ, որ դու կեղծելով (կամ սխալվելով) որպես սոց-դեմոկրատ, մնացել ես անկեղծ և մարդասեր որպես գեղարվեստագետ:

Սեր, սեր, Կարեն, դեպի տանջվածը, հարստահարվածը ավելին, առհասարակ, դեպի մարդը: Այդ գագամունքը չլինի, ու՞ր կմնան քո ընդդեմ գաղափարները և հիմարությունն չ'ի թվա ծերեթեիների և ջափարիձենների (վրաց հասարակական-քաղաքական դործիչներ – Ռ. Բ.) նահատակությունը գաղափարի համար: Հաճախ տաքացրու քո դրվածքները այդ գագամունքով, եղիք անկեղծ և ընդունիր իմ համոզմունքը, որ շատ հաջող, շատ մեծ գործ կկատարես մեր աղքատ գրականության համար:

Այո, «Նահանջը» յուր թույլ կողմերով հանդերձ դեղեցիկ, ժամանակակից գրվածք է:

Հաջողություն: Ընդունիր բարևներս: (...) Յուլակ

4. Միքայելյանի Ֆ., № 350:

3. Յ. Խանգաղյանը 4. Միքայելյանին

11. 12. 1913 թ.

Սիրելի Կարեն

Получил твое, прямо-таки, замечательное письмо! Այսքան գեղեցիկ կամար հանգուցյալի գերեզմանի վրա – ուղղակի Չեխովին հիշեցրիր: Այնքան դուր եկավ քո նամակը, որ գործը թողի, որպեսզի պատասխանեմ քեզ և հայտնեմ իմ տպավորությունները: Մեծ բավականություն պատճառեցիր, թեև հաղորդածդ լուրը ցավալի հանգամանքներ ունի իր մեջ: Նախ «Գարունը»: Իհարկե, ցավալի է նրա գաղարումը, բայց ինչ պիտի անենք, որ ազգը չի ուզում օգնության հասնել, թեև զրագետներն կարգում են մեր «Գարունը»: Գոնե շատ շատերն են դիմել ինձ և տեղեկություն խնդրել այդ մասին: Ուրեմն աստված հոգին լուսավորի:

Հիանալի վարպետությունք ցուցել ես Ալեքսանդր Զուգեպովիչի (Ա. Ծատուրյան – Ռ. Բ.) անմահ խոսքերը, այո, «ապաղա պատմաբանները» փայլուն էջեր պետք է նվիրեն «Գարունի» «շտուրմ ունդ դրանդ»⁵ պերիո-

⁵ «Արընթաց հարձակում և գրոհ» (գերմ. – Ռ. Բ.):

դին»։ Գիտես, երկար վախտ չէի ուզում ինքս իմ առաջ խոստովանել, որ «Գարունը» մեր համար արգեն անցյալ է, այն մտքով, որ նրա դեֆեկտները այժմ առանձնակի ցայտունություններ են երևում աչքումս։ Մանավանդ, III գիրքը, որ չնայած իր խոշոր սլակասություններին, պետք է մեր գործունեության «մեխը» համարել, ինչպես ասում են ռուսները։ Գոնե աղմուկը այդ է ցույց տալիս։ Իսկական շտուրմունդ դրանք։ Է՛հ ջանք, կարելի է քննադատել, կծու համեմի հասցնել արտահայտություններին, բայց, հիշում ես, - «չափը, չափը, բարեկամ»։ Այնպիսի խիզախ թափով նետվեցինք ասպարեզ, կարծես թե թշնամու անհամար գործերը եկել, շրջապատել էին մեր սրբազան ոստանը, այնպիսի ուժով վրա բերինք մեր (...), կարծես թե մեր առջև գրանիտից ժայռեր էին կանգնած։

Իհարկե, դիտարկումս, խոսքս Պողոսին (Պ. Մակինցյան - Ռ. Բ.) ու քեզ է վերաբերվում, «Գարունի» խոշոր ղալմաղալչիներին։ Մենք ինձ Դոն-Քիչոտներ ենք թվում։ Բայց սքանչելի Դոն-Քիչոտություն է դա, որ թեթևամտության, տհասության մեջ էլ ահագին բովանդակություն ունի մտքի խիզախություն, կոսլիա անկեղծություն։

Եթե այժմ գրեինք մեր հոգվածները, որքան ավելի լավ կլինեք, իհարկե, խիզախությունը կարելի էր պահպանել, բայց թեթևամտությունը, համոզված եմ, որ չէր լինի։ Ախ, եթե հոգվածը հիմա լինեի գրելիս։ Երևի Պողոսը նույնը կասի։ Որքան էլ արժանավորություններ լինեն, այլ կերպ պետք էր գրել։ Այնուամենայնիվ, օրհնյալ լինի մեր «շտուրմ ունդ դրանք»։ Ապագա պատմաբանը (առանց չակերտների) երկու տողով գոնե կհիշատակի մեզ (...) Ցույլով։

Կ. Միքայելյանի ֆ., № 346:

4. Կ. Միքայելյանը Ա. Ծատուրյանին

11. 06. 1915 թ.

Մոսկվա

Հարգելի պ. Ծատուրյան

Խնդրեմ երկուշաբթի օրվա համար ժամ նշանակեք, որ հավաքվենք խմբագրական մի շարք որոշումներ կատարելու համար։ Հարգանքներով կարեն։

Բրյուսովը ուզում է Ձեր ոտանավորները։ Ցանկալի է, որ ինքներդ ընտրեք ու՛ կատարեք։ Առավել ևս, եթե ինքներդ (...) թարգմանեիք։ Եթե թարգմանեիք - տրանսկրիպցիա տալուց հրաժարվելու լինեք - ես կանեմ այդ, բայց ընտրովի։ (...)

Ա. Ծատուրյանի ֆ., № 346:

5. Ա. Լիսիցյանը⁶ Կ. Միքայելյանին

2. 08. 1915 թ.

Մեծարդո պ. Կ. Միքայելյան

Ահա ուղարկում եմ Ձեզ «Արու լալա Մահարու» թարգմանությունս: Դժբախտաբար սլ. Լեոնյանը (Գարեգին Լեոնյան – Ռ. Բ.) մինչև հիմա չի վերադարձել Թիֆլիս և թարգմանությունը արված է Կ. Պոլսում 1911 թ. Արծիվ ժողովրդական գրավաճառանոցի հրատարակած օրինակից: Կարծում եմ ոուս ընթերցողի համար միևնույն է արված է թարգմանությունը սրբագրված ձեռագրից, թե տպագրած օրինակից:

Ես խիստ կերպով հետևում էի, որ թարգմանությունը հավատարիմ լինի ընագրին, ըստ խորթ չլինի ոուս լեզվին: Իմ ամեն մի տողը համապատասխանում է ընագրի ամեն մի տողին, այդ է պատճառը, որ ես պահպանեցի ձեռագրիս մեջ հայերեն տպած օրինակի արտաքին կերպարանքը: Կարելի է իհարկե երկու մի նախագասություն կազմող տողերը միացնել և առանձին-առանձին տպել այդ միացրած նախագասությունները, թեպետ ավելի լավ է պահպանել ընագրի ձևը, ինչպես ձեռագրիս մեջ եմ արել: Իմ տառադարձության վերջին երեսի վրա ժողովածուի խմբագրության ոուս անգամների համար ես գրում եմ թե ինչու ութմիկ պրոզան գերադասեցի ոտանավորին:

Տառագարձրել եմ միայն առաջին երկու սուրահները, որովհետև ինձ համար մոլթ էր այդ դաժան և անախորժ աշխատանքի իսկական նպատակը: Եթե տառադարձությունը հարկավոր է Ձեզ՝ չափը հետադոտելու համար, ես չսխալվեցի, մտածելով որ այդ երկու սուրահները ավելի քան բավական են այդ նպատակի համար: Կուղենայի որքան հնարավոր է շուտ իմանալ իմ թարգմանության մասին Ձեր կայացրած վճիռը և արդյո՞ք կարոտ է սրբագրությանը, նույն էլ՝ ո՞ր չափով:

Անցյալ նամակիս մեջ գրել էի Շանթի «Կինը» վիպակի թարգմանության մասին, գերադասելով աշխատանքս հանձնել Ձեր ժողովածուին, սպասում եմ Ձեր պատասխանին:

Ընդունեցեք հարգանքներս

Արբուհի Լիսիցյան

Կ. Միքայելյանի Ֆ., № 333:

6. Հովհ. Թումանյանը Կ. Միքայելյանին

16. 02. 1916 թ.

Թիֆլիս

Հարգելի պ. Կարեն, ներեցեք, խնդրում եմ, որ էսպես ուշ եմ պատասխանում Ձեր նամակին, շատ էր գլուխս խառնված: Ձեզ ուղարկվելիք լուսանկարն արդեն ինքը վալերի Յակովլևիչը վերցրեց հետը:

⁶ Արբուհի Լիսիցյան (1893–1979) – ազգագրագետ, արվեստաբան. Հայտնի ազգագրագետ Ստեփան Լիսիցյանի դուստրը:

Հենց նրանց ճանապարհ դրի՝ կայարանից տուն եկա թե չե՝ հեռագիր ստացա, որ փոքր եղբայրս, 23 տարեկան օֆիցեր, սպանված է:

Քուհակի և Սայաթ-Նովայի երդերի մասին արած իմ նկատողությունների մեջ մի երկու սխալ եմ արել, էս երկու օրը կուղղեմ:

Շահը պետք է մնա մեծատառ, փարը – վահան, միայն նույն տողի շուխկը ոչ թե ճառագայթ է՝ այլ ստվեր, խարն էլ և փուշ է և թերևս բողոճ, ոչ հաստատ:

Շատ բարևներով ու հարգանքով Հովհ. Թումանյան

4. Միքայելյանի ֆ., № 326:

7. Գր. Չալխուշյանը՝ Կ. Միքայելյանին

12. 01. 1917 թ.

Դոնի Ռոստով

եղբայր Կարեն. Ձեր երեկոն պիտի կայանար Նոր-Նախիջևանի քաղաքային վարչություն գահլիճում 19 հունվարի: Իրավունքը քաղաքագլխից ստացել էի և այսօր պիտի դիմեի քաղաքապետին թույլտվություն համար, բայց ստացա Ձեր հեռագիրը: Երևի բան պատահե՞լ է Ձեզ: Իմացրեք:

Սիրով Գ. Չալխուշյան

4. Միքայելյանի ֆ., № 442ա:

8. Գր. Չալխուշյանը Կ. Միքայելյանին

23. 02. 1918 թ.

Դոնի Ռոստով⁵

եղբայր Կարեն, այս նամակս կբերե Ձեզ իմ եղբորորդին՝ Կարապետ Չալխուշյանը: Այսօր խոսեցինք Ձեզ հետ ուղիղ թելով: Ի՞նչ ասեմ: Ոչինչ մխիթարական – մեր սլատմությունը շարունակվում է, նույն երեմիական ողբը. չքացավ և այն աղոտ լույսը, որ կարծես պլպլում էր մեր աչքերին: Սխալ էր Ռուսաստանի հետ մեր ազգի բախտը կապելը, սխալ էր կամավորական շարժումը, մեր ոգևորությունը, ըմբոստ դուբա դալը: Ավաղ, խաբվեցինք, խաբված մարդկանցից, ազգերից, բախտից, Ասածոց: Հավատը արգեն մարում է սրտիս խորքում, բարեկամ..., գործում եմ մոլթը կրծքիս մեջ, իներցիով, որովհետև պետք է գործել ու նմանացել եմ այն մարդուն, որի մեջ ամենասիրականին թաղելու համար է ու մարդկանց առաջ չլայուհ համար է, որ դեռ եռանգ է պահպել իր մեջ: Ձեղանից ջոկ ոչ ոք թող չկար-

7 Գրիգոր Չալխուշյան (1861–1931) – Հասարակական-քաղաքական գործիչ, բանասեր և հրապարակախոս, իրավաբան, Նոր-Նախիջևանի քաղաքային Դումայի անդամ և Բարեգործական ընկերության նախագահ:

5 Նամակը գրված է "Окружной комитет защиты Кавказского фронта и спасения Армении и армян" բլանկի վրա:

դա տողերս: Բավական չեմ և մեր Հայկական խորհրդից, որը չգործեց այն եռանդով, որով պետք էր գործել: Սակայն և տարրերք մեր դեմ է: Վրացին չեզոք, թուրքը թշնամական, ռուսը միշտ ռուս – թալանի կարոտ: Եվ միակ հույսս Կովկասի հայության վրա է: Գեթ բաժակը անցներ նրանից, մնար տեղը չկոտորված, որպեսզի ապագա մնար մեղ, նորից սկսելու, նորից կոելու մեր ազգի բախտը: Իսկ եթե կոտորվի...

Բոլշևիկները առայժմ մեզ հալածում են. խլեցին մեր գեներերը (հինգ հարյուրից ավելի), նայում են մեր վրա կասկածներով: Դեպի թուրքը ավելի մեծ համարում ունեն: Մոտ երկու միլիոն ժողովեցինք, մի միլիոնը ուղիղ թելով փոխադրեցինք: Ունենք կամավորներ, ճանապարհ չկա: Բաքուն պարկ է գառել, որի մեջ մնում են մեր ուղարկածները: Իբր թե տասը հազար կովորներ մնացել են Բաքվում: Գանձակը թրքերի ձեռքին է, չեն թողնում որ անցնենք: Այսպիսով, ոգևորության կըակը մարում է: Որոնում ենք ճանապարհ: Ծովը գերադասելի էր, բայց գերմանական սուզանավերը վտանգ են սպառնում: Մնում է ռաղմական (Ռազմավիրական – Ռ. Բ.) ճանապարհը, սակայն Վլադիկավկասը ոչ միշտ բաց է: Ահա մեր բախտը, ներեցեք այս բոլոր տխուր տողերի համար, դրում եմ իբր գաղափարական ընկերի: Ավելին կասեմ, գործում ենք բոլորս մեծ եռանդով: Կարծես վերջին կոիվն է ու չենք խնայում մեր ուժերը: Իմ երեք որդիներս էլ գնում են: Փող ժողովվում է բավականաչափ: Եթե մեծամասնականները (բոլշևիկները – Ռ. Բ.) չգային, մեր գործը ավելի լավ կերթար, նրանց մտնելը, տասներկու միլիոն տուղանքը շատ բան խանգարեց, շատ բան քանդեց, նամանավանդ նրանց գլուխ կանգնած մի լակոտ – ժուլը, որը նրանց նախագահն է, մեր դեմ բռնած թշնամական վերաբերմունքը: Բողոքում ենք ուժեղ: Տեսնենք ինչ դուրս կգա: Հարգանքներս Գ. Չալխուչյան

Կ. Միքայելյանի Փ., № 442:

9. Կ. Միքայելյանը Տ. Կամսարականին⁹

5. 06. 1929 թ.

Մոսկվա

Արեւի Տիգրան

(...) Հիշում ես, մի անգամ քեզ կարդացի իմ ճանասլարհորդական տպավորութունների ձեռագիրը: Տպագրության մասին ես խոսեցի ընկ. Խանջյանի հետ, վերջինս ուզեց ձեռագիրս և խոստացավ տպագրել «Նոր ուղի» ամսագրում: Այնպես որ մեր պատմական ճանապարհորդութունը պատմության գիրկը կանցնի: Պիտի գրեմ ամբողջը: Հետո ես նրան իմ դժգոհութունը հայտնեցի Խանոյանի (սովետական հասարակական-քաղաքական գործիչ – Ռ. Բ.) անպատասխանատու և անարդարացի քննադատության մասին իմ «Մաժեստիկ» գրքի մասին: Այնքան գրեց, թե նացիո-

⁹ Տիգրան Կամսարական (1866–1941) – հասարակական-քաղաքական գործիչ, գրող:

նալիստական գիրք է, որ երեկ «Պայքարից» տեղեկացա, որ «Հայրենիքը» սկսել է ամբողջ գիրքը ֆելիետոնի ձևով արտատպել իր էջերում: «Պայքարը» իր կողմից հարց էր տվել, թե այդ արտատպության համար ունեն արգյոք իմ համաձայնությունը: Նրանք այդ քայլն արել են անկասկած իսանոյանի հոգևածից հետո:

Ուզում եմ «Խորհրդային Հայաստանում» բողոքեմ: Ինչպես երևում է, սա առաջին գեպքը է: Այդպիսի արտահայտություններ էլ արել են Դեմիրճյանի և Ջորյանի դրվածքներից:

Ես էլ այս ընդհանուր գրաված եմ իմ դրվածքների 4-րդ գրքի տպագրությունում, որ լույս կտեսնի մինչև մի ամիս: (...)

Կ. Միքայելյանի ֆ., № 785:

10. Ա. Խանջյանը¹⁰ Կ. Միքայելյանին

25. 07. 1929 թ.
Երևան

Ընկ. Միքայելյան

Ես ուշադրություն դարձրեցի Ձեր ճանապարհորդական տպավորությունները Կալիֆորնիայի մասին: Ուզում եմ այդ առթիվ հայտնել հետևյալը: Տպավորությունները գրված են տաղանդով և կարգացվում են հետաքրքրություններ, սակայն 1) պատմվածքների ժողովածուից հետո նոր էլեմենտներ չեն ավելացնում ամերիկյան տպավորությունների շարքում, եթե նկատի չունենանք Կալիֆորնիայի բնության նկարագրությունը, 2) Ձեզ հյուրասիրող հայի բնակարանի և նիստուկացի նկարագրությունը (խոհանոցը ևս) մանր-քաղքենական և բուրժուական կենցաղի իդեալականացման փոքր ինչ տպավորություն է թողնում, 3) հասարակական հետաքրքրությունը շարժող խնդիրները քիչ են մշակված: Ես կարծում եմ, որ կրճատելով որոշ մասեր գրվածքը կարելի կլինի օգտագործել «Նոր ուղու» մոտակա համարներում, եթե իհարկե դուք տաք ձեր համաձայնությունը: Ինչ վերաբերվում է շարունակությանը, ապա եթե կարողանաք շոշափել նոր նյութեր և խոսսափեք կրկնողություններից (ժողովածուի նկատմամբ) կարելի կլինի այս կամ այն կերպ օգտագործել: Ներեցեք, որ շատ զբաղված լինելու պատճառով պատասխան չկարողացա ժամանակին ուղարկել:

Հարգանքով Ա. Խանջյան

Կ. Միքայելյանի ֆ., № 345:

¹⁰ Աղասի Խանջյան (1901-1936) – Հայ նշանավոր պետական գործիչ, Հայաստանի Կոմկուսի երկրորդ, 1930-ից առաջին քարտուղար: